

« 29 » հուլիս 2026թ. No 4358 - Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԵԴԻԱՆՏ ԼԱՅՖՔԵՅՐ ՊՐԻՎԱՏ Ս/Օ ՀԵԱԼԹ ՔԵՅՐ
ՖՈՐՄՈՒԼԱԹԻՈՆ ՊՎՏ. ԼՏԴ. Ս/8, ՍԱՐԴԱՐ ԷՍԹԱՏ, ԱԶՎԱ ՌՈԱԴ ՎԱԴՈԴԱՐԱ-
390 019 ԴԻՍԹ. ՎԱԴՈԴԱՐԱ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ
ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՖԱՐՄՊՐՈԵԿՏ ՍՊԸ, ՄԱՀԱՐՈՒ ՍԹ. 133/5, 0020, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ԼԵՎՈՑԵՏԻՐԻԶԻՆ ՖԱՐՄՊՐՈԵԿՏ ԼԵՎՈՑԵՏԻՐԻԶԻՆ
(ԼԵՎՈՑԵՏԻՐԻԶԻՆԻ ԴԻՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ) ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ 5ՄԳ;
(10/1X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԴԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի՝ դեղի գրանցման կասեցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված փորձագիտական կազմակերպության կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 18-ի N 1122-Ն որոշման 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2026 թվականի հուլիսի 23-ի թիվ 23211 փորձագիտական եզրակացության և համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 31-րդ մասի 2-րդ կետի (հայտնաբերվել է անվտանգության,

արդյունավետության, որակի շտկման ենթակա անհամապատասխանություն սահմանված պահանջներին, հատկորոշիչներին, նոր գիտական տվյալներին):

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 60-րդ կետի՝ դեղի գրանցումը կասեցվում է «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 31-րդ մասով սահմանված դեպքերում:

Համաձայն «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 31-րդ մասի 2-րդ կետի՝ դեղի գրանցումը կասեցվում է, եթե հայտնաբերվել է անվտանգության, արդյունավետության, որակի շտկման ենթակա անհամապատասխանություն սահմանված պահանջներին, հատկորոշիչներին կամ որակի նորմատիվ փաստաթղթին, նոր գիտական տվյալներին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 2 հավելվածի 62-րդ կետի՝ Դեղի գրանցումը կասեցնելու վերաբերյալ հրամանն ընդունվում է փորձաքննության եզրակացությունը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով կասեցման ժամկետը:

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը, 16-րդ հոդվածի 31-րդ մասի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետը, N 2 հավելվածի 62-րդ կետը, ինչպես նաև իրավական և վերոգրյալ փաստական հիմքերից ելնելով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել Հնդկաստանի Մեդիզանտ Լայֆքեյր պրիվատ ս/օ հեալթ քեյր ֆորմուլաթիոն պլտ. լտդ. ս/8, Սարդար Էսթատ, Աջվա ռոադ Վադոդարա- 390 019 դիսթ. Վադոդարա արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Ֆարմպրոեկտ ՍՊԸ, Մահարու սթ. 133/5, 0020, Հայաստանի Հանրապետություն «Լոնգետիրիզին Ֆարմպրոեկտ լոնգետիրիզին (լոնգետիրիզինի դիհիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 5մգ; (10/1x10/) բլիստերում» դեղի գրանցումը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝ ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա.Առաքելյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն

հրամանի տրամադրումը «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին, հայտատուին, դեղերի շրջանառության սուբյեկտներին:

4. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղդյանին՝ ապահովել դեղերի գրանցամատյանում Հնդկաստանի Մեդիզանտ Լայֆթեյր պրիվատ ս/օ հեալթ թեյր ֆորմուլաթիոն պվտ. լտդ. ս/8, Սարդար Էսթատ, Աջվա ռոադ Վադոդարա- 390 019 դիսթ. Վադոդարա արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Ֆարմպրոեկտ ՍՊԸ, Մահարու սթ. 133/5, 0020, Հայաստանի Հանրապետություն «Լնոցետիրիզին Ֆարմպրոեկտ լնոցետիրիզին (լնոցետիրիզինի դիհիդրոքլորիդ) դեղահատեր թաղանթապատ 5մգ; (10/1x10/) բլիստերում» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում կասեցնելու մասին համապատասխան նշում կատարելը:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

 Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157